Պետրոս Դուրյան

Ի՞նչ կ՚ըսեն

Ինծի կ՚ըսեն ինչո՞ւ լուռ ես».
«Ո՛հ, միթե բառ կամ խոսք ունի՞
Արշալույսը, որ կը բռընկի,
Ջի անհուն է այն ալ ինձ պես»:

Ինծի կ՚ըսեն միշտ տխուր ես».
«Ի՞նչպես չըլլամ, մեկիկ մեկիկ
Թոթափեցան գլխուս աստղիկք…
Արշալույս մը չ՚անցավ սրսրտես»:

Ինծի կ՚ըսեն կրակոտ չ՚ես,
Լրճակի մը պես ես մեռած,
Դալկահա՛ր դեմքդ ու հայեցված»:
«Ո՛հ, հատակն են իմ փրփուրներս»:

Ես ինձ կ՚ըսեմ ժամդ է հասեր,
Քու երկրորդ սև մորդ գրնա գոգ,
Գերեզմա՛ն, հո՛ն գտնես դու գոգ
Վարդեր, թրթռում, թռիչ ու աստղեր…»:

1871